ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-N9

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

30. 06.2020թ. ք. Իջևան

Նախագահ՝ Գ. Ավետիսյան
Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Խորհրդի նիստին մասնակցում էին գիտախորհրդի բոլոր անդամները:
Բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Օրակարգ /հունիս/

1. Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանների քննարկում և հաստատում /2020-2021/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
2. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունների քննարկում և հաստատում /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
3. ՈՒսումնական խորհրդատուների և ԿԾ պատասխանատուների 2019-2020 ուստարվա երկրորդ /գարնանային/ կիսմյակի հաշվետություն /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

1. *Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական աշխատանքային պլանների քննարկման և հաստատման մասին /2020-2021/: / Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/*

Լսեցին – Մ. Միքայելյանին

Մ. Միքայելյանը նշեց, որ 2020-2021 ուստարվա «Ֆինանսներ» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է ելնելով նախորդ երեք տարիների ուսումնական պլաններից: 2020-2021 աշխատանքային ուսումնական պլանների ժամանակին քննարկման և հաստատման հարցը շատ կարևոր է ամբիոնի աշխատանքների կազմակերպման համար, որովհետև դրա հիման վրա պետք է անմիջապես սկսել ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունների աշխատանքները: Նա նշեց, որ 2020-2021 աշխատանքային ուսումնական պլանների նախագիծն ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին և կարելի է ներկայացնել գիտական խորհրդի հաստատմանը:

Լսեցին - Գ. Հովհաննիսյանին

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ 2020-2021 ուս տարվա «Զբոսաշրջություն» մասնագիտության աշխատանքային ուսումնական պլանը կազմվել է ելնելով նախորդ երեք տարիների ուսումնական պլաններից և ամբողջությամբ համապատասխանում է ներկայացվող նորմատիվային պահանջներին:

Արտահայտվեցին – Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը

Որոշեցին. – Հաստատել ֆակուլտետի «Ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների 2020-2021 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանների նախագծերը և ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտխորհրդի հաստատման:

2. Լսեցին.- Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների ամբիոնային ծանրաբեռնվածությունների քննարկում և հաստատում /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի հաստատման է ներկայացվել «Ընդհանուր տնտեսագիտություն» և «Տուրիզմի կառարվարման և մշակութաբանություն» ամբիոնների ամբիոնային բեռնվածությունները, որոնք կազմվել են ուսումնական աշխատանքային պլանների հիման վրա և քննարկվել են համապատասխան ամբիոններերում:

Արտահայտվեցին – Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը

Նրանք նշեցին, որ ամբիոնային բեռնվածությունները քննարկվել են ամբիոններում, նկատառումներ չեն եղել: Ուստի առաջարկեցին հաստատել ամբիոնային բեռնվածությունները:

Որոշեցին– Հաստատել «Ընդհանուր տնտեսագիտություն» և «Տուրիզմի կառարվարման և մշակութաբանություն» ամբիոնների ամբիոնային բեռնվածությունները:

3.Լսեցին.- Ֆակուլտետի ուսումնական խորհրդատուների և ԿԾ պատասխանատուների 2019-2020 ուստարվա երկրորդ /գարնանային/ կիսամյակի հաշվետություն /Զեկ. Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Լսեցին.- Ուսումնական խորհրդատու Ա. Սարիբեկյանին:

Ա. Սարիբեկյանը նշեց, որ 2019-2020 ուստարվա թե առաջին, թե երկրորդ կիսամյակում առաջին կուրսի ուսանողները բավականին ինտերգրվել էին մասնաճյուղի ուսումնական և հասարակական կյանքին: Ակտիվ ու առանց բացակայությունների հաճախել են դասապրոցեսներին: Սակայն երկրորդ կիսամյակում նրանք, ինչպես ամբողջ համալսարանը, կանգնեցին փորձության

առջև։ Մինչ հեռավար ուսումնառության անցնելը, ուսանողները բավականին ժամանակ ազատ էին դասապրոցեսից, ինչը հետագայում դարձավ խիտ գրաֆիկի պատճառ։ Ավելացան նաև ինքնուրույն աշխատանքները։ Ինքնուրույն աշխատանքների բալային գնահատումը և վերջնական գնահատականի մեջ դրա ներառումը մոտիվացրեց ուսանողներին։ Դասախոսները գոհ էին ուսանողների դասընթացներին մասնակցությունից և առաջադրանքների արդյունքներից։ ՈՒսանողները նշում էին, որ հեռավար ուսուցմը ավելի շատ ջանքեր և ինքնուրույնություն է պահանջում։

Քննաշրջանը ընթացավ նախատեսված ժամկետներում։ Սակայն պետք է նշել հեռավար քննության առավել բացասական կողմը՝ այն շատ ժամանակատար է։ Դասախոսները շատ հետաքրքիր մեթոդներ կիրառեցին քննական տոմսերի ընտրության և պատասխանների ընդունման համար, ինչը որոշ չափով լրացրեց այդ բացը։ ՈՒսանողների ոչ մի հարց չէր մնում անպատասխան, իսկ սխալները ոչ միայն նշվում էին, այլ նաև մանրամասն կրկին բացատրվում։

Առաջին կուրսը երկրորդ կիսամյակում ուներ եզրափակիչ գնահատմամբ երկու առարկա։ Յուրաքանչյուրից ուսանողների միայն 20%-ն է ստացել անբավարար գնահատական։ Կարելի է ասել, որ նախորդ կիսամյակի համեմատությամբ արդյունքների էական փոփոխություն չկար։

ՈՒսանողների մշտական զբաղվածությունը թույլ չէր տալիս հաճախակի կապ հաստատել նրանց հետ։ Սակայն կուրսի ավագի հետ մշտական կապը և ավագի պարտաճանաչությունը օգնեցին թե կանխել, թե լուծել արդեն ծագած խնդիրները։

Հունիսի 7-ին կայացավ հաջորդ ուսումնական տարում նախատեսված կամընտրական առարարկաների ընտրությունը։ ՈՒսանողներին կողմնորոշելու համար կրթական ծրագրից ներկայացվեցին դասընթացների նպատակը, թեմաները և վերջնարդյունքները։ Կարծում եմ ուսանողները հաջողությամբ ավարտեցին առաջին բուհական ուսումնական տարին։ Ֆորսմաժորային պայմաններում ստացած

հեռավար ուսումնառության փորձը անհրաժեշտության դեպքում կօգնի խուսափել շատ բարդություններ։

Լսեցին.- Ուսումնական խորհրդատու Ա. Ուլիխանյանին:

Ա. Ուլիխանյանը նշեց, որ իրենց կողմից հիմնականում իրականացվել են ըստ 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանի նախատեսված գործընթացները: Մարտ ամսվա կեսերից աշխատանքներն իրականացվել են առցանց՝ կապված հանրապետությունում ԱԻ հայտարարելու հետ: Այս իրավիճակում լիովին չեն իրագործվել ՈՒԳ-ի և ՈՒԽ –ի համատեղ միջոցառումները:

Լսեցին.- «Ֆինանսներ » մասնագիտության ԿԾ պատասխանատու Ա. Սարիբեկյանին:

2019-2020 թթ. ուս տարվա երկրորդ կիսամյակի աշխատանքները մեծամասամբ անցան հեռավար, պայմանավորված COVID-19 պանդեմիայով: Հիմնական ուշադրությունը ուղված էր ավարտական կուրսին: Փետրվարի 10-ից «Տնտեսագիտություն» մասնագիտության ավարտական կուրսի ուսանողները, Ա. Ալեքսանյանի ղեկավարությամբ, հաջողությամբ անցան արտադրական պրակտիկան տարբեր հաստատություններում: Պրակտիկայի վայրերը և դրանց համապատասխան կազմված ծրագրերը թույլ տվեցին ուսանողներին գործնական տեղեկատվություն հավաքել ավարտական աշխատանքների պատրաստման համար: Պարբերաբար, հեռավար հանդիպումների միջոցով, պարզվել են աշխատանքների ընթացքը, կատարողականը և ծագող խնդիրները: Ապրիլի 30-ին կայացավ նախապաշտպանությունը, որի ընթացքում քննարկվեցին խնդիրները և ուսանողները ստացան կարևոր խորհրդատվություն: Նախապաշտպանությունը առավել արդյունավետ էր, քանի որ մասնակցում էին ավարտական աշխատանքների ղեկավարները: Հիմնականում խնդիրները պայմանավորված էին հեռավար հանդիպումներով ղեկավարների հետ, սակայն բոլոր ուսանողները նշված ժամկետներում հանձնեցին աշխատանքները: Պաշտպանությունից առաջ

յուրաքանչյուր ուսանողի հետ հեռախոսային զանգով պարզվել է պատրաստվածությունը (համակրգչի, հեռախոսի, ականջակալի առկայությունը)։ Որից հետո կայացավ հանդիպում, որին մասնակցում էր նաև ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար պարոն Ա. Մակարյանը։ ՈՒսանողների 40%-ը նշեց համակարգչի բացակայությունը և ինտերնետային կապի խափանումները։ Քննարկման արդյունքում որոշվեց խմբերով օգտվել մեկ համակարգչից, իսկ մեկ ուսանող ցանկություն հայտնեց պաշտպանությունը անցնել համալսարանի համակարգչային սրահում։ Պաշտպանությունը անցավ առանց խոչընդոտների, անբավարար գնահատական չկար։

«Ֆինանսներ» մասնագիտության երրորդ կուրսում նախատեսված կուսային աշխատանքների կատարման ընթացքը նույնպես իրականացվել է հեռավար հանդիպումներով և կուրսի ավագի հետ հեռախոսային զանգերով։ 17 ուսանողից միայն 5-ը հանձնեցին աշխատանքները և պաշտպանեցին նախատեսված ժամկետում։ Մյուսները, պատճառաբանելով խիտ դասացուցակը և ծանրաբեռնվածությունը ինքնուրույն աշխատանքներով, ցանկություն հայտնեցին տեղափոխել պաշտպանությունը լուծարքային շրջան։

Հունիսի սկզբին կազմակերպվել է առաջին,երկրորդ և երորդ կուրսերի կամընտրական առարկաների ընտրությունը։ Հանդիպումների ժամանակ ուսանողներին կողմնորոշելու համար քննարկվել են դասընթացների նպատակները, խնդիրները և վերջնարդյուքները։

Դասախոսների հետ քննարկումներ են կազմակերպվել մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման հետ կապված։ Հետազոտական բաղադրիչով դասընթացների ցանկը կցված է։ Սրա հետ պայմանավորված փոփոխությունները ներառվել են կրթական ծրագրում։ Ամբիոնի վարիչ Մ. Միքայելյանի հետ համատեղ կազմվել է 2020-2024 ուս. տարիների կրթական ծրագիրը։

Բոլոր կուրսերի քննություններին մասնակցությունը թույլ տվեց պարզել հեռավար դասավանդման թե խնդիրները, թե հնարավորությունները հետագա աշխատանքների կազմակերպման համար: Դրանք կներկայացվեն նոր ուսումնական տարվա կազմակերպման համար նախատեսված հանդիպումներին:

Լսեցին.- «Զբոսաշրջություն» մասնագիտության ԿԾ պատասխանատու Ա. Ուլիխանյանին

Ա. Ուլիխանյանը նշեց, որ որպես «Զբոսաշրջություն» մասնագիտության կրթական ծրագրերի ղեկավար, 2019–2020 ուստարվա ընթացքում առաջնորդվել է նախապես հաստատված աշխատանքային պլանով: Իրենց կողմից աշխատանքներն իրագործվել են տնօրինության, ՄԿՈԱ բաժնի, դեկանատի, ամբիոնի վարիչի մշտական աջակցությամբ: ՈՒսումնական տարվա 2-րդ կիսամյակում՝ մարտ ամսվա կեսերից աշխատանքներն իրականացվել են առցանց՝ կապված հանրապետությունում ԱԻ հայտարարելու հետ: Պլանով նախատեսված աշխատանքները հիմնականում իրագործվել են, բացի ավագ դպրոցների ավարտական դասարաններում մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումների անցկացումը / աշխատանքային պլանի 10-րդ կետ/:

1. Որոշեցին - Տնտեսագիտության ֆակուլտետի «ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների առաջին կուրսերի ուսումնական խորհրդատների աշխատանքները գնահատել բավարար:

2. Որոշեցին - Տնտեսագիտության ֆակուլտետի «ֆինանսներ» և «Զբոսաշրջություն» մասնագիտությունների ԿԾ պատասխանատուների աշխատանքները գնահատել բավարար:

Նախագահ՝ *Գ. Ավետիսյան*

Քարտուղար՝ *Ա. Ալեքսանյան*